

պատրողական հացկատակացն երեւեցան կերպարանք, ցուցակ ստոյգ¹ լի ամաւթալից ձաղանաւք: 13 Եւ էին գոյնք² ամենեցուն արդարեւ, ըստ ասացածի եկեղեցական հռետորին³, ծիւրեալք, ծնկեալք, երիթացեալք, պատկերի նմանեալք. զորս արդարեւ յայտ յանդիման առաջի երբեմն գերջացն⁴ խայտառակեալ նշաւակեաց խաչելութիւնն Զրիստոսի: 14 Եւ կատարեալ առ նոսա ելաներ ի գլուխ բան սաղմոսերգին. *Ոչ այսպէս են ամբարիշտք եւ ոչ այնպէս^ա*, որպէս էին թշուառացեալք եւ ողորմելի մարդիկն այն⁵, որոց ատրուշանն շնորի չունէր, եւ յեկեղեցւոյ սրբոյ անձամբ մերժեալ արտաքս ընկեցան: 15 Ժողովեալ նստին առ միմեանս ապշեալք, քամակաբեկք, զարթուցեալք որպէս յերագոյ ցնորից գիշերոյ: 16 Եւ ընդ Աստուծոյ զաւրութեան գործ զարհուրեալ ապշէին՝ փութանակի եւ յանկարծ առնել զնոսա այնպէս դժմիտս եւ ձաղադեմս առաջի սիրելեացն իւրեանց. ցանկային բազում գնոց առնուլ, թէ գոյր հնար, զապստամբութեանն անուն, եւ ոչ ոք տայր նոցա: 17 Վասն զի որ ոք յայնպիսի անծանալթիցն կամեր երբեք մտանել յատեանն՝ ի բազմութեան ասեր ցնուիրակսն, թէ «Յապստամբացն գնդէն եմ», եւ վաղվաղակի թողուին ի ներքս. այլ ոչ ոք տայր մաւտել ի դուրս ատենին, եւ ոչ լսել զխաւսս իշխանացն որ զինչ խաւսէին: 18 Յայնժամ յայտնի տեսանէր յստակ ակն խորհրդոյ ճշմարտասիրացն զպայծառաբար յաջողութեան ճախրումն զսրբոյն Գրիգորի⁶, ամենայն ճգնազգեցիկ ընկերովքն իւրովք⁷, ի վերայ յերկարահամբեր ուխտապահացն բանակին, որ զամենայն երեսս Պարսիկ մարդկանն եւ զայլսն՝ ահիւ եւ խնդութեամբ հայեցուցանէր ի Մամիկոնեանն Վահան. որում տայր Զրիստոս իմաստ շնորհալից պատրաստաբան, աջողակ ի գիւտ խոհականութեան, ձայնարձակութիւն պատուեալ խաւսիւք. եւ կատարեալ ելաներ ի գլուխ բան Փրկչին Զրիստոսի, գրեալն յԱւետարանն. *Ոչ եթէ դուք իցէք որ խաւսիցիք, ասէ՞, այլ Հոգին Հաւր ձերոյ, որ խաւսիցի ի ձեզ^բ*:

19 Եւ երկրորդեալ յատենին զնոյն բանս Մամիկոնենին Վահանայ՝ սկսանէր միւսանգամ խաւսել ընդ Նիխորոյ եւ ասէր. «Յաղագս իւրաքանչիւր ուրուք խնդրոյ եւ աւգտի, որ այժմ աստ են առաջի ձեր նախարարք եւ

1 Ձ. ստոյք

2 ԲԳտ. գոյն

3 «Եւսեբիոս, յեկեղ. Պտմ. զուրացողաց ոմանց» (ծնթ. ԲԳտ.)

4 Ձ. գերջաց իւրեանց

ա Սաղմ. Ա 4

5 ՏՏ. չիք այն

6 ՏՏ. սրբոյն Գրիգորի. Ձ. սրբոյն զգրիգորի

7 Ձ. ընկերքն իւրովք

8 ԲԳտ. չիք ասէ

Բ Մատթ. Ժ 20